ՊԱՏՄԱԿԱՆ

ՕՍՄԱՆԵԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՅՈՅՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՎԷՃԸ ԸՍՏ ՅՈՒՆԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲԻՒՐԻ (1720-1730-ական թթ.)

Ս. Տեղեաց շուրջ բանավէճերը եւ Երուսաղէմում դաւանական հանրութիւնների փոխադարձ յաւակնութիւնները սրբավայրերի իրենց սեփականութիւնների նկատմամբ՝ շարունակուել են բիւզանդական ժամանակներից ի վեր։ Դրանք չեն դադարել նաեւ այս տարածաշրջանում օսմանեան տիրապետութեան հաստատումից (1510-ական թթ.) յետոյ եւս, երբ այդ յաւակնութիւնները վերածւում էին գործնական հետեւանքների եւ փաստական իրողութիւններ էին դառնում այս կամ այն միաբանութեան (ուղղափառ, Հայ Առաքելական, կաթոլիկական) կողմից միւսի սեփականութեան իւրացումը, որպիսիք էին Ս. Տեղեաց մասեր, ամբողջական եկեղեցիներ, վանքեր կամ դրանց հատուածները եւ այլն։ Օսմանեան կայսրութեան ժամանակաշրջանում եւս երբեւէ չդադարող պայքարը դաւանական համայնքների միջեւ՝ միշտ կամ գրեթէ միշտ ունեցել են քաղաքական բնոյթ, երբ բախւում էին կայսրութեան եւ նրա հպատակ քրիստոնէական համայնքների շահախնդրութիւնները, ինչպէս եւ կայսրութեան եւ եւրոպական տէրութիւնների (XVIII դ. նաեւ Ռուսաստանի) ռազմավարական շահերը։ Երուսաղէմի քրիստոնէական միաբանութիւնների միջեւ եղած հակասութիւնները առանձնապէս ցայտուն դրսեւորուեցին XVIII դ. 30-ական թթ., երբ ուղղափառ՝ յունական կողմը փորձում էր Երուսաղէմի Հայոց պատրիարքութիւնից խլել նրա գլխաւոր ստացուածքը՝ Ս. Յակոբեանց Մայր տաճարը, ինչպէս եւ Ս. Տեղեաց տարածքներում Հայերի ունեցած վաղնջական իրաւասութիւնները։ Նշուած հակասութիւնն ունէր նաեւ երկրորդական բաղադրիչներ՝ Երուսաղէմում դաւանակից ազգերի (Յոյներին դաւանակից էին Վրացիներն ու Ռուսները, Հայերի պարագայում՝ Ասորիները, Հապէշներն ու Ղպտիները) սեփականութիւնների ժառանգման հիմնահարցը, ինչպէս եւ պաշտամունքի իրացման ժամանակ միաբանութիւնների առաջնայնութիւնը իմաստաւորող ծիսակարգի խնդիրը։ Դրանք էին նշուած ժամանակաշրջանում յոյն-հայկական հակասութիւնների հիմնական պատճառները եւ որոնց բացատրութեան հարցում հարկ է նկատի առնել այն հանգամանքը, որ XVII-XVIII դդ. ընթացքում առաջինը ուղղափառ կողմն էր առաջ քաշել իր պահանջները Երուսաղէմում հայկական ստացուածքների, եւ առաջին հերթին, ինչպէս նշեցինք, հայկական Ս. Յակոբեանց Մայր տաճարի նկատմամբ։ Այս հակադրութիւնը, որ առանձին հետազօտութեան նիւթ է, իր իւրայատուկ, բայց եւ ամբողջական դրսեւորումն է գտել, իբրեւ ուղղափառ կողմի տեսակէտ, Յոյն նշանաւոր հոգեւորական, Երուսաղէմի ուղղափառ պատրիարք (1739 թ., մինչ այդ՝ Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտ) Պարթենիոս Աթենացու աշխատութեան մէջ[1]։ Յոյն-հայկական տարաձայնութիւնների եւ առհասարակ, կայսրութեան տարադաւան հանրութիւն-

[1] Այս աշխատութիւնը՝ բնագրի եւ հայերէն թարգմանութեան համադրմամբ, իր հմտալի առաջաբանով եւ ծանօթագրութիւններով հրատարակել է ակադ. Հրաչ Բարթիկեանը՝ «Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի Պատմութիւն Յունաց եւ Հայոց տարաձայնութեան» (Երեւան, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, 2008) վերնագրով։

ների վէճերի ուսումնասիրութեան տեսակէտից Պարթենիոսի աշխատութիւնը, որպէս սկզբնաղբիւր, ունի անգնահատելի նշանակութիւն։ Այն կոչուած է հիմնաւորելու Ս. Տեղեաց մէջ ուղղափառ եկեղեցու սեփականատիրական իրաւասութիւնները, ընդ սմին, պատմական վաւերագրերի վկայակոչումով եւ բացառապէս այդ եկեղեցու մեկնաբանմամբ եւ նրա իրաւացիութեան դիրքերից, յոյն-հայկական բանավէճի նկատմամբ Օսմանեան իշխանութիւնների վերաբերմունքի հանգամանալի ցուցադրմամբ եւ այլն։ Հարկ է նկատել, որ այս վերջինը՝ յատկապէս 1730-ականի բանավէճում Օսմանեան պաշտօնէութեան մշտական ներկայութիւնն ու գործելակերպը հայկական համապատասխան գրականութեան մէջ, կարծում եմ, չի արտայայտուել այնպիսի ընդգրկումներով եւ մանրամասներով, ինչը տեսնում ենք Պարթենիոսի շարադրանքում։ Հետեւաբար, այս հիմնահարցում եւս Յոյն հոգեւորականի աշխատութիւնը Երուսաղէմում տարբեր միաբանութիւնների սեփականատիրական վէճերի, դրանց լուծումների ընթացքում պաշտօնէութեան կեցուածքի, Ս. Քաղաքում իրաւարար դատարանի գործունէութեան լուսաբանման գործում ունի ճանաչողական կարեւոր նշանակութիւն։ Ի վերջոյ, այն լրացնում է հպատակ ազգերի (միլէթների) հանդէպ Օսմանեան տէրութեան վարած քաղաքականութեան մի որոշակի բնագաւառի վերաբերեալ մեր պատկերացումները եւ որն իր հերթին անմիջականօրէն առնչւում է Ս. Տեղեաց սեփականութիւնների հարցում շահագրգիռ արեւմտեան երկրների հետ Օսմանեան պետութեան որդեգրած դիւանագիտական ուղեգծին։ Երուսաղէմում յոյն-հայկական յարաբերութիւններն այս իմաստով դուրս են գալիս զուտ դաւանական շրջանակներից եւ գերաճում Օսմանեան պետութեան ներքին եւ արտաքին քաղաքականութեան առարկայի։ Աւելացնենք, որ այս խնդիրը մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի կտրուածքով ներկայացնում է գիտական անհերքելի արժէք՝ դառնալով սոյն հիմնահարցի դրուագներից մէկը եւ դրանով հանդերձ՝ առանձին հետազօտութեան նիւթ։

Պարթենիոսի շարադրանքում, անկախ Երուսաղէմում ուղղափառ միաբանութեան՝ հայկական ստացուածքների նկատմամբ ունեցած պահանջների արդարացիութեան անվերապահ համոզմունքից, հիմնականում շօշափւում է երեք հիմնահարց՝ Ս. Յակոբեանց Մայր տաճարի պատկանելութեան, դաւանակից ազգերի իրաւայաջորդութեան (սեփականութիւնների ժառանգորդման) եւ պաշտամունքային ընդհանուր բնոյթի հարցերում միաբանութիւնների առաջնայնութեան խնդիրը։ Բոլոր այս հարցերում մի կողմ թողնելով բանավիճային կրքով թելադրուած՝ հայկական կողմին տրուած Պարթենիոսի յոյժ անբարեացակամ բնութագրերը, անցնենք իր երկում շրջանառող պաշտօնէութեան նկարագրին։ Վերջինս նրա գրչի տակ հանդէս է գալիս գլխաւորապէս բացասական կողմերով եւ ուղղուածութեամբ. մի շատ պարզ վերապահումով՝ բացառութեամբ այն դէպքերի, երբ Օսմանեան իշխանութիւնները նպաստաւոր դիրքորոշում են ի յայտ բերում յօգուտ ուղղափառ կողմի։ Մնացեալ դէպքերում եւ յաճախ իրաւացիօրէն, Յոյն հեղինակը ցուցադրում է այդ իշխանութիւնների զօշաքաղութեան (կոռուպցիա) եւ ընչաքաղցութեան հակումները։ Այս աշխատութեան նշանակութիւնն այս տեսակէտից առաւել ընդգրկուն է դառնում Օսմանեան վարչական մեքենայի գործառութային ընթացքի, սահմանուած կարգուկանոնի, ինչպէս եւ դրանց խափանումների անմիջական բացայայտումներով, որպիսիք կային եւ անհրաժեշտաբար՝ բռնակալական վարչակարգի պայմաններում։ Երուսաղէմում Ս. Տեղեաց սեփականատիրական վէճերը՝ պաշտօնական փաստաթղթերի վկայակոչմամբ եւ ընդունուած իրաւական նորմերի (այդ թւում եւ սովորութային) առկայութեամբ հանդերձ, լուծում

էին մեծ վեզիրի եւ Երուսաղէմի դատարանի վճիռներով, որ վերջնականապէս հաստատում էր սուլթանական հրովարտակներով (ֆերմաններ, բերաթներ) եւ որոնց կայացումը ոչ քիչ դէպքերում ուղեկցւում էր կեղծիքներով, հակասական եւ իրարամերժ այլընտրանքներով, վարչական մեքենայի վրայ ներգործող ներքին եւ արտաքին գործօններով, վերջինիս յատուկ պահպանողական ոչ ճկուն շարժով ու դանդաղկոտութեամբ։ Պարթենիոսի աշխատութիւնը կարելի է բնութագրել սրանց առնչուող առարկայական վերհանումներով, եւ որը, իր հերթին, կարեւոր բացայայտումներ է անում Օսմանեան կայսրութեան այդ դարաշրջանի՝ XVIII դ. առաջին կէսին յատուկ իրաւունքի եւ բարոյականութեան աղերսների վերաբերեալ։

Հեղինակն իր շարադրանքում ուղղափառ հոգեւորական է եւ ամենուրէք նրա մըտայնութեան հիմքում ընկած է քրիստոնէական աշխարհայեացքն ու դրանից ածանցւող բարոյականութիւնը, եւ եթէ կայ մէկը, որի նկատմամբ նա անողոք է եւ շրջանցում է կրօնին յատուկ ներողամտութիւնը, այդ հայերն են, գրեթէ բացառապէս՝ Հայ հոգեւորական վերնախաւը։ Նրա երկում, որն ամբողջովին սուր բանավիճային բնոյթ ունի եւ որը մեզ իրաւունք է տալիս այն պարսաւագիր (պամֆլետ) համարել, այդ հոգեւորականութիւնը մշտապէս հանդէս է գալիս որպէս իր շահերի համար ամէն ինչի պատրաստ եւ ամէն մի գործողութեան ընդունակ տարր։ Պարթենիոսը կեղծիք է համարում Հայ գործիչների իւրաքանչիւր փաստաթուղթ, որ ներկայացնում են նրանք ի պաշտպանութիւն իրենց սեփականատիրական իրաւունքների։ Իր աշխատութիւնը նա սկսում է Հայերին կեղծարարութեան մէջ մեղադրելով՝ «մօտ քսան տարուայ» վաղեմութեան դէպքեր նկարագրելով[2] եւ վկայակոչելով Ս. Գերեզմանի գմբէթի նորոգումը, որին մասնակցում էին Ս. Քաղաքի բոլոր միաբանութիւնները։ Առաջին ակնարկը, որ անում է Պարթենիոսը պաշտօնէութեան զօշաքաղութեան եւ Հայերի կաշառատուութեան մասին, վերաբերում է այս իրադարձութիւններին։ Կեղծարարները, յարում է նա, «դրամական միջոցներ կուտակելով՝ փորձում էին իրենց ուզածը պաշտօնապէս էլ հաստատել»[3]։ Եւ քիչ անց՝ «Հայերը ջանում էին ապացուցել, որ տուեալ պարագայում Զատկի տօնը (առաջինը - Ա. Խ.) նշելու իրաւունքը վերաբերում է իրենց, եւ փորձում էին դա հաստատել կաշառքի օգնութեամբ»[4]։

Պարթենիոսն առանձնայատուկ ուշադրութիւն է դարձնում 1730-ականի յոյն-հայկական փոխյարաբերութիւններին՝ Երուսաղէմում եւ Կոստանդնուպոլսում եւ այս իմաստով նրա շարադրանքում հիմնականում պահպանուած է իրադարձութիւնների ժամանակագ-

---

[2] Հայերը շինարարութեան առիթից օգտուելով, նշում է նա, Երուսաղէմի բնակիչներից հաւաքել էին «բազմաթիւ վկայութիւններ, իսկ դատաւորից՝ փաստաթղթեր» եւ կեղծիքներ մտցրել դրանց մէջ՝ բովանդակութիւնը փոփոխելով (Պարթենիոս Աթենացու Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտի պատմութիւն Յունաց եւ Հայոց տարաձայնութեան, էջ 5։ Այսուհետեւ՝ Պարթենիոս Աթենացու պատմութիւն)։ Հեղինակը որեւէ թուական չի նշում, բայց կարելի է կարծել, որ խօսքը վերաբերում է 1720 թ. Երուսաղէմում արտօնուած նորոգման աշխատանքներին, որովհետեւ նա յաւելում է, որ այս կերպ Հայերը «Աւելի քան եօթ տարի նախապատրաստում էին եւ գործի անցան հետեւեալ (մօտալուտ Ծոգատկի - Ա. Խ.) պատճառով (Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 5-7)։ Յիրաւի, 1727 թ. Նոյեմբերին, Երուսաղէմի Յունաց պատրիարք Խրիսանթոսը նամակ էր գրել Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Յովհաննէս Կոլոտին՝ 1729 թ. Ծոգատկին ուղղափառների եւ հայադաւանների միջեւ հնարաւոր ընդհարումները կանխելու համար, եւ որից յետոյ կողմերը ձեռ էին բերել համատեղ գործողութիւնների համաձայնութիւն (տե՛ս **Գ. Բամպուքճեան**, Յովհաննէս պատրիարք Կոլոտ, Ստամպուլ, 1984, Մուրադ օֆսէթ, էջ 50)։ Պարթենիոսի՝ մօտ քսան տարի առաջուայ Ս. Գերեզմանի գմբէթի շինարարութեան (1720) յիշատակումը նաեւ ցոյց է տալիս, որ նա իր աշխատութիւնը աւարտել է 1739-1740 թթ., այսինքն, երբ Բ. Դուռը վերջ տուեց յոյն-հայկական բանավէճին։

[3] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 5։

[4] Նոյն տեղում, էջ 7։

բական յաջորդականութիւնը։ Մեծ վեզիր Ալի փաշայի ժամանակ Երուսաղէմում Հայերի սեփականատիրական դիրքերի ամրապնդումը նա համարում է Օսմանեան վարչախըմբի կաշառուածութեան հետեւանք։ Ուղղափառ եւ հայկական միաբանութիւնների տարաձայնութիւնների սրումը 1734 թ.՝ Հայ հեղինակը, իր հերթին, բարդում է Երուսաղէմի Յունաց պատրիարք Մելետիոսի վրայ, որը չէր զլանում Հայերի դէմ «խրոխտ լեզու» գործածելուց եւ մերձաւորների շրջանում իր թաքնուած մտադրութիւնները յայտնելուց։ Հայ համայնքի գլխաւորները, ըստ այդ հեղինակի, պատրաստ էին ընդդիմախօսների գործողութիւններին եւ դեռեւս մէկ տարի առաջ՝ 1734 թ., չվստահելով յունական կողմի չէզոքութեանը, նրանցից գաղտնի նորոգել էին տուել «այն ամէն հրովարտակներն ու վաւերագիրները, որոնց մէջ յիշուած էր Ս. Յակոբին՝ Հայոց սեփականութիւն ըլլալը»[5]։

Կը նշանակի՝ 1734 թ. հայկական կողմին յայտնի էր դարձել, որ ընդդիմախօսները փորձելու են խլել Ս. Յակոբի վանքը՝ չնայած կողմերի միջեւ դրանից ոչ շատ առաջ «սիրոյ եւ խաղաղութեան» փաստաթուղթ էր ստորագրուել[6]։ Այս դրուագը եւ դրան հետեւած՝ իշխանութիւններին ուղղուած Հայերի բողոքը Պարթենիոսը ներկայացնում է վերջիններիս քսութիւնների թուարկումով, ընդհուպ մինչեւ մեծ վեզիր Ալի փաշային կաշառելը, որն իր ստորադրեալներին «հրամայեց գործել յօգուտ Հայերի»[7]։

Մի կողմ թողնելով հակառակորդների բանավիճային փոխադարձ մեղադրանքները, ասենք, որ հայկական կողմին տրուած սուլթանական ֆերմանը Պարթենիոսը համարում է թիւրիմացութիւն՝ խաբէութեան արդիւնք, որին Հայերը հասել են պաշտօնեաներին կաշառելու միջոցով։ Պաշտօնական բուրգի վերեւում մնում է սուլթանը, որին, հասկանալի պատճառով, հեղինակը կողմնակալ կամ կաշառուած չի կարող համարել, բայց ընդամէնը՝ խաբուած, որը Հայերի իրաւունքները հաստատող հրովարտակ էր արձակել։ Այս հրովարտակը, ի դէպ, Պարթենիոսը մէջբերում է բառացի եւ կարելի է կարծել, այն ունի բնագրային վաւերականութիւն, որովհետեւ այնտեղ յունական կողմի բոլոր յաւակնութիւնները հերքող վճիռներ են կայացուած, եւ որի դէմ, որպէս չարիքի վաւերացում, իր ամբողջ շարադրանքում մարտնչում է Պարթենիոսը։ Ի մի բերելով այդ՝ 1734 թ. հրովարտակի վճիռները, նշենք դրանք առանձին-առանձին.

Հնուց ի վեր սահմանուած կարգով Հապէշները, Ղպտիները եւ Ասորիները պէտք է գտնուեն Հայ եկեղեցու իրաւասութեան ներքոյ,

Եօմեր Սալահեդդինից սկսած (XII դ.)[8] մինչեւ ներկայ ժամանակները Յոյներն ու Հայերը «Քրիստոսի գերեզմանի մուտքի հաւասար իրաւունք ունեն» եւ այնտեղ մուտք են գործում միասին,

Հապէշները, Ղպտիներն ու Ասորիները, նրանց բնակատեղիներն ու ուխտավայրերը պէտք է դարձեալ մնան Հայերի իրաւասութեան ներքոյ[9]։

Հրովարտակի բոլոր վճիռները բխում են մահմետական իրաւունքին յատուկ՝ նախադէպի կարեւորագոյն նորմից, այսինքն, այն իրողութեան ընդունումից, որ Հայերը Երուսաղէմում օգտուել են նշուած իրաւունքներից, իսկ այն որոշումները, որոնք Յոյ-

---

[5] **Տ. Սաւալանեանց**, Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ, հ. Բ, 1931, տպարան Ս. Յակոբեանց, էջ 715։

[6] Նոյն տեղում։

[7] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 13։

[8] Նոյն տեղում, էջ 164 (տե՛ս Հ. Բարթիկեանի ծանօթագրութիւնը)։

[9] Նոյն տեղում, էջ 17-19։

ներն անցեալում ստացել են գաղտագողի եւ նորոգել, համարել անվաւեր[10]։

Հրովարտակը, ինչպէս ասուեց, տրուել է 1734 թ., ամիս-ամսաթիւը նշուած չէ, բայց, կարելի է կարծել՝ այդ տարուայ Սեպտեմբերից առաջ, Հէքիմզատէ Ալի փաշայի մեծ վեզիրութեան օրօք, նախքան յունական կողմի հովանաւոր Կիւրճի Իսմայիլ փաշայի՝ այդ պաշտօնին անցնելը[11]։ Պարթենիոսն այդ որոշումը համարում է կեղծիքի արդիւնք, որին դիմակայելու համար յունական կողմն անզօր էր եղել, որքան էլ բողոքի բազմաթիւ ժողովներ անէր. «Սակայն դա լինելու բան չէր, միթէ կարելի է ընդդիմակայել, երբ [պաշտօնեաներից - Ա. Խ.] շատերը կշտապինդ էին հայոց դրամներով»,- գրում է նա[12]։

Այս որոշումը, սակայն, ժամանակաւորապէս էր հանդարտեցնելու կրքերը։ Իրականում կողմերը նախապատրաստւում էին նոր դիմակայութիւնների։ Յունական կողմը, ըստ Պարթենիոսի, զբաղուած էր իր փաստաթղթերի կուտակմամբ եւ ստուգմամբ[13]։ 1734 թ. աշնանը եւ դրան հետեւող ամիսներին նրանք Երուսաղէմի իրենց պատրիարքութեան դիւանում եւ Երուսաղէմի դատարանում որոնում էին համապատասխան «փաստաթղթեր, օրագրական որոշումներ»[14]։ Այս անգամ եւս, ինչպէս գրեթէ միշտ, հակառակորդները գործի դրեցին իրենց բոլոր հնարաւոր մատչելի միջոցները՝ հասնելու ցանկալի արդիւնքների, որ առատ պտուղներ էր խոստանում կաշառակեր պաշտօնէութեանը։ Յունական կողմը բանավէճ ներմուծեց 80-ամեայ վաղեմութիւն ունեցող մի հին նորոյթ՝ Ս. Յակոբի վանքի պատկանելութեան խնդիրը։ Չնայած յունական կողմի թաքուն գործելակերպին, այդ մասին տեղի ունեցաւ տեղեկատուական արտահոսք. «Երուսաղէմցի մի մուսուլման, իմանալով մեր փաստաթղթերի որոնման մասին, Հայոց Գրիգոր Վարդապետին (Շղթայակրին - Ա. Խ.) տեղեակ պահեց եւ տեղեկութիւնը բազում ոսկեդրամով վաճառեց»,- գրում է Պարթենիոսը[15]։

Սակաւ դէպքերում հեղինակը խոստովանում է, որ իրենք եւս դիմում էին պաշտօնեաներին կաշառելու միջոցին։ Այս կերպ նրանք ձեռք բերեցին 1734 թ. պաշտօնական որոշումը (կամ ֆերմանը), որտեղ վերահաստատւում էին կողմերի իրաւունքները եւ մերժւում էին յունական ընդդիմախօսների յաւակնութիւնները Երուսաղէմում Հայերի ստացուածքի, այդ թւում եւ Ս. Յակոբի վանքի նկատմամբ[16]։ Պարթենիոսը գրում է, որ այդ որոշման վերաբերեալ տեղեկութիւն չունեցող Յոյները կաշառում են պաշտօնեայի մերձաւորներից մէկին, որը «ոսկուց գայթակղուած՝ գիշերով գողացաւ կալֆայի (պաշտօնատար անձի - Ա. Խ.) մօտ եղած որոշումը, բերեց մեզ»[17]։

Ս. Յակոբի վանքին տիրելու ծրագիրը գործադրելու նպատակով յունական պատրիարք Մելետիոսը մեկնել էր Կոստանդնուպոլիս՝ հակառակ վերոյիշեալ խաղաղութեան ուխտի, ինչպէս գրում է Տ. Սաւալանեանցը[18]։ Պարթենիոսի շարադրանքում, մինչդեռ, ուխտադրուժը հայկական կողմն է[19]։ Նրա շարադրանքից պարզ է դառնում, որ նա ինքն

---

[10] Նոյն տեղում, էջ 19։

[11] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ, էջ 3328-3329, 3354-3355։

[12] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 19։

[13] Նոյն տեղում, էջ 23։

[14] Նոյն տեղում։

[15] Նոյն տեղում, էջ 23-25։

[16] Նոյն տեղում, էջ 41-43։

[17] Նոյն տեղում, էջ 45։

[18] **Տ. Սաւալանեանց**, Պատմութիւն Երուսաղէմի, հ. Բ, էջ 715։

[19] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 47-49։

է գնացել Շղթայակրի մօտ եւ խաղաղութեան յորդորներ տուել, թէեւ վերջինիս բնութագրում է չթաքցրած ատելութեամբ։

Ամենուրէք, որտեղ որոշում է կայացւում Հայերի օգտին, Պարթենիոսը տեսնում է նրանց կողմից տուեալ պաշտօնեային կաշառելու փաստը։ Կաշառքը, ըստ նրա, շարժիչ ուժ է Օսմանեան վարչական համակարգում՝ վերից վար, ըստ իշխանական օղակների միջեւ եղած ենթակայական յարաբերութիւնների։ Այս պաշտօնէութեան մէջ Պարթենիոսը միայն մէկ բացառութիւն է առանձնացնում, որին պատկերում է սրբի լուսապսակով եւ Աստծոյ արդարութեան ու առաքինութեան շնորհներով։ Խալիսսա անուամբ այդ պաշտօնեան աւելի շատ վիպական, քան իրական անձնաւորութիւն է, որը խորհրդանշում է այս բանավէճում Յոյների արդարացիութիւնը եւ միշտ պաշտպանում նրանց։ Խալիսսայի գործունէութիւնը Պարթենիոսին հնարաւորութիւն է տալիս, եւ այդ նրա աշխատութեան արժանիքներից մէկն է, ցոյց տալ Օսմանեան պաշտօնական վերնախաւի (թարգմանութեան մէջ վերադիտողների կալֆա՝ հաւանաբար, վեզիր քեահեասը, քեաթիպ էֆէնտի՝ հաւանաբար, նիշանջի, շէյխ ուլ-իսլամ՝ մուֆտի, կուսակալ՝ մեծ վեզիր, դատաւորներ եւ այլն) գործառոյթները խնդրոյ առարկայ բանավէճի շրջանակներում։ Արձանագրելով մեծ վեզիրների արագ փոփոխութիւնները (պաշտօնանկութիւնները 1730-ական թթ.՝ Մէհմետ փաշայ, Իբրահիմ փաշայ, Օսման փաշայ, Ալի փաշայ), նա չի վարանում նրանցից ոմանց մեղադրել կաշառակերութեան մէջ, մանաւանդ, նրանք արդէն պաշտօնանկ էին։ Մեծ վեզիր Ալի փաշային, որը 1734 թ. նպաստել էր հայկական կողմի օգտին ձեւակերպուած հաթթը շէրիֆին (հրամանագրին) նա համարում է խաբուած (Հայերի կողմից) եւ դիւրահաւատ պաշտօնեայ, որի պատճառով նա բարեացակամ էր տրամադրուած Հայերի հանդէպ[20]։ Դրան անմիջապէս հետեւում է հեղինակի դատավճիռը, որում այդ բարեացակամութիւնը մեծ վեզիրին էժան չի նստում. «Սիրալիրութիւնը,- գրում է Պարթենիոսը,- մէն-մենակ թոյլ է տալիս իշխանաւորներին շատ բաներ անել։ Եթէ մէկն ու մէկը մի ուրիշին հաւատ ընծայի՝ ելնելով սիրալիրութիւնից, նա պետութեան գլխին պատուհաս է բերում, կարծելով, որ արածն արդար է[21]։

Ըստ Պարթենիոսի տրամաբանութեան, բարձր պաշտօնէութեան հակուածութիւնը կաշառակերութեան եւ անարդարութեան, անպտուղ պէտք է դարձնէին յունական կողմի ջանքերը իրենց իրաւացի դատը պաշտպանելիս։ Մինչդեռ, 1734-1735 թթ. եւս կողմերը երկուստեք գործի էին դնում դատաւորներին կաշառելու ուղեգիծը, երբ յունական կողմը զգալի յաջողութիւնների էր հասել Ս. Յակոբի վանքին տիրելու իրենց ջանքերում։ 1735 թ. Դեկտեմբերի 5-ին, Մխիթար Աբբային գրած նամակում ոմն Պօղոս վարդապետ տեղեկացնում էր, որ «Յոյնք այժմ գնացեալք առ դատաւորս տաճկաց ի ձեռն դրամոյ բազմաց առնուլ ի ձեռաց հայոց զսուրբ Յակօբն բովանդակ. և իմացեալք հայոց զայս՝ անկան և նոքա առ դրունս դատաւորաց՝ տալով նոցա զդրամս բազումս և ցոյց տալով նոցա (Յոյներին - Ա. Խ.) զայն հաստատութիւնն, որոց տուեալ է Օմերն, մինչ տուեալ է հայոց զսուրբ Յակօբ, կոխելով զձեռն իւր ի վերայ այնր հաստատութեան թղթոյն՝ արարին զի բանն յունաց ոչ առաջացաւ... բայց ասեն թէ մինչեւ 300 քսակ դրամ գնաց հայոց, մինչև ի յայս աստիճան ժամանեաց բանն»[22]։

---

[20] Նոյն տեղում, էջ 73:

[21] Նոյն տեղում:

[22] **Ղ. Տայեան**, Մայր դիւան Մխիթարեանց Վենետկոյ ի Ս. Ղազար, 1707-1733, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1930, էջ 62:

1735 թ. Յոյների յաջողութիւնները Պարթենիոսն առնչում է գրեթէ միաժամանակ յայտնուած Խալիսսայի մտացածին կերպարի եւ մեծ վեզիր Կիւրճի փաշայի արդարամբտութեանը։ Ի դէպ, Հայ հեղինակի տեղեկութիւններով այս վերջինը համարւում է «ազգաւ վրացի», որով եւ բացատրւում է նրա անվերապահ համակրանքը Վրացիներին դաւանակից յունական կողմի նկատմամբ[23]։ Թւում է, յունական կողմը յաջողութեան պէտք է հասնէր Ս. Յակոբի վանքին տիրանալու գործում. մեծ վեզիրը կարգադրում է Երուսաղէմից մայրաքաղաք բերել այն հաթթը շէրիֆը (չեղարկելու դիտաւորութեամբ), որ դրանից առաջ՝ մեծ վեզիր Ալի փաշայի օրօք, արձակուել էր յօգուտ Հայերի։ Իրադարձութիւնները, սակայն, շատ աւելի արագ ընթացան՝ Իսմայիլ փաշան պաշտօնանկ արուեց արքունիքի եւ Բ. Դրան միջեւ սրուած հակասութիւնների պատճառով[24]։

Ամբողջ 1734-1739 թթ. Երուսաղէմի Ս. Տեղեաց շուրջ իրադարձութիւններն ընթացան փոփոխակի յաջողութիւններով, որոնք արտացոլուած են Պարթենիոսի աշխատութեան, ինչպէս եւ սոյն բանավէճին անդրադարձած Հայ հեղինակների գործերում։ Միայն մէկ էական տարբերութեամբ՝ կողմերից իւրաքանչիւրն աշխատում է դիմացինին պատկերել որպէս կաշառատուի, խարդաւանողի եւ պայքարի ընթացքում միջոցների մէջ խտրութիւն չդնող անխիղճ հակառակորդի։ Այդ ամէնը հասկանալի է դառնում, մանաւանդ, երբ նկատի ենք ունենում, որ խնդիրը վերաբերում էր նրանց սեփականատիրական իրաւունքներին։ Բայց այստեղ ուշագրաւն այն է, որ նրանք իրենց դատի արդարութիւնն ու օրինաւորութիւնն ապացուցելու համար վկայակոչում են տիրակալների իրարամերժ հրովարտակներ, մեծ մասամբ՝ սուլթանական հաթթեր կամ ֆերմաններ (տրուած կամ տարբեր ժամանակներում եւ կամ կողմերի մօտ գտնուող եւ բովանդակութեամբ տարբեր) եւ այս պայմաններում, ի դէմս մեծ վեզիրի, մնում էր միայն ընտրութիւն անել օրինական համարուող վաւերագրերի միջեւ, կայացնել վճիռ (թէկուզ եւ Երուսաղէմի դատարանի կայացրած), որով եւ խնդրոյ առարկայ հարցի լուծումը ժառանգաբար յանձնւում էր ապագայ տիրակալներին եւ այսպէս շարունակ։ Նշուած տարիների յոյն-հայկական ներհակութիւնը աչքի է ընկնում, սակայն, այն առանձնայատկութեամբ, որ գրեթէ լուծուած դատը Յոյների օգտին՝ վերանայուեց եւ մարուեց Երուսաղէմում կողմերի ստատուս քվոյի պահպանութեամբ։ Դրանով Մահմուդ Ա-ի (1730-1754) օրէնսգէտներն ապահովում էին եւ Օսմանեան օրէնքների աւանդականութիւնը եւ միլէթների (կրօնադաւանական հանրութիւնների) պահպանութեան՝ դարձեալ պահպանողական մտայնութիւնը, միաժամանակ, բացառելով միջազգային ասպարէզում հնարաւոր հակառակորդների առարկութիւնները։ Պարթենիոսի աշխատութիւնն այստեղ ի յայտ է բերում վերը նշուած պարագաների ներքին բովանդակութիւնը՝ Օսմանեան պաշտօնատար անձանց հակասական դիրքորոշումները, համակրանքներն ու հակակրանքները, հակառակորդ կողմերին խրախուսելու կամ ըմբերանելու հարցում նրանց գործելակերպն ու ոճը։ Պարթենիոսը լաւ է ճանաչում Օսմանեան պաշտօնէութեանը, նրա հիերարխիկ կառուցուածքն ու բաղադրամասերի իրաւասութիւնների սահմանները։ Այս տեսակէտից եւս ճանաչողական ծալքեր են պարունակում պաշտօնեաներին տուած նրա բնութագրերը, մեծ վեզիր Կիւրճի Իսմայիլ փաշայի դիւանում (կամ ատեանում) սկսուած, բայց չավարտուած նիստի նկարագիրը՝ խնդրոյ առարկայ վէճի առթիւ։ Նրա շարադրանքից երեւում է, որ մեծ վեզիրի դատին յունական կողմը նախա-

[23] **Ա. Տէր Յովհաննէսեան**, ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. Բ, Երուսաղէմ. 1890, ի տպարանի Ս. Յակովբեանց, էջ 40։

[24] Նոյն տեղում։ Տե՛ս նաեւ **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ, էջ 3354-3355։

պատրաստուել էր ամենայն բծախնդրութեամբ։ Հայկական տեքստերում նման մանրամասն նկարագրութիւններ չկան, թէեւ Հայերը եւս, իրենց հերթին, փորձում էին շահել (ոչ քիչ դէպքերում՝ գործի դնելով կաշառքը, ինչպէս յունական կողմը) պաշտօնատար անձանց բարեացակամութիւնը։ Յունական կողմին ակնյայտօրէն համակրող Իսմայիլ փաշան հասցրել էր այս ընթացքում կշեռքի նժարը կտրուկ իջեցնել յօգուտ յունական կողմի. հայկական կողմի գլխաւորներից ձերբակալւում են Սեղբոսը, ապա Յ. Մուրատեանը[25] (Պարթենիոսի երկում՝ Մուրատօղլու)[26]։ Մեծ վեզիրը եւս լրջօրէն էր նախապատրաստուել Ս. Յակոբի վանքը Հայերից խլելու եւ նրանց հակառակորդներին յանձնելու դժուարին փորձին։ Գործը, յիրաւի, լուրջ էր այնքանով, որ նա պէտք է հիմնաւորէր նախորդ մեծ վեզիր Ալի փաշայի արձակած՝ 1734 թ. հրովարտակի (որ պատրիարք Յովհ. Կոլոտն ուղարկել էր Երուսաղէմ՝ Գրիգոր Շիրուանցուն)[27] փոխարինումը նորով։ «Գործը եպարքոսին թողուեցաւ եւ թագաւորական հրաման ելաւ Հայոց տրուած հրովարտակը ետ առնել» եւ որը մայրաքաղաք պէտք է բերէր Երուսաղէմ ուղարկուած զինակիրը, ինչպէս գրում է Մ. Օրմանեանը[28]։ Սակայն, ինչպէս տեսանք. իրադրութիւնը կտրուկ փոխուեց յօգուտ Հայերի, երբ Կիւրճի Իսմայիլը պաշտօնանկ արուեց եւ նրան փոխարինեց նոր մեծ վեզիր Էսսեիտ Մէհմետ փաշան։ Բանտարկուած Հայերն ազատուեցին, այս անգամ նոր զինակիր ուղարկուեց Երուսաղէմ՝ յիշեալ հրովարտակը Հայերի ձեռքին թողնելու պատուերով[29]։

Ուշագրաւ է Պարթենիոսի երկում առկայ եւ Օսմանեան իրաւական գործառոյթներում կիրառուող՝ օրէնքների մեկնաբանութիւնների խնդիրը։ Պարթենիոսը քանիցս բողոքում է, որ հայկական կողմը կեղծել է պատմական վաւերագրերի փաստերը՝ հիմք դարձնելով վաւերագրերին կցած նոր մեկնաբանութիւնները։ Այսպիսով, նա իր ճշմարտութիւնը փորձում է ապացուցել Օսմանեան իրաւունքի կարեւոր սկզբունքներից մէկի յստակ գիտակցումով՝ նոր մեկնաբանութիւններն աղաւաղել են նախադէպի նորմը եւ ուրեմն, վաւերագրերի նախնական իմաստը, որ եւ վկայում է արարքի քրէական բնոյթի մասին։ Նա իր մեղադրանքները, ինչպէս տեսանք, յենում է այն իրողութիւնների վրայ, թէ, իբր, այն նոյն հրովարտակները, որ միաժամանակ տրուել են Յոյներին եւ Հայերին, տարբերւում են միմեանցից, եւ որ յունական կողմին պատկանող այդ նոյն վաւերագրերում չկան այն մեկնաբանութիւնները,[30] որոնք արուել են ի նպաստ հայկական կողմի, կը նշանակի, այդպիսիք յետագայում սարքուել եւ աւելացուել են Հայերի կողմից։ Այսպիսով, նրանք կեղծելով բերաթների մեկնաբանութիւնները, դրանց հին կնիքները փոխարինել են նորերով եւ այս փոփոխութիւնները նրանք կատարել են Օսմանեան պաշտօնեաներին կաշառելով։

---

[25] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 137, 149-151։

[26] Նոյն տեղում, տե՛ս Հ. Բարթիկեանի ծանօթագրութիւնը, էջ 170։

[27] **Մ. Օրմանեան**, Ազգապատում, հ. Բ, էջ 3355։

[28] Նոյն տեղում։

[29] Նոյն տեղում, էջ 3355-3356։ Գործի վերանայման այս միջոցներին կամ դրանից փոքր-ինչ ուշ, Յովհ. Կոլոտը շտապ Կոստանդնուպոլիս է հրաւիրում Գր. Շիրուանցուն՝ իր հետ բերելու այս ներհակութեան շահեկան լուծմանը նպաստող վաւերագրերը։ Վերջինս Երուսաղէմից դուրս է գալիս 1736 թ. Մայիսի 6-ին (տե՛ս Ստորագրութիւն ուղեւորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի պատրիարքի Ս. Աթոռոյս Երուսաղէմէ ի Կ. Պոլիս, «Սիոն», 1866, թիւ 8, էջ 123)։

[30] Օսմանեան օրէնքների մեկնաբանութիւնները բուն օրէնքների շարադրանքներում կատարում էր մահմետական իրաւունքի մասնագէտ-պաշտօնեան, որ կոչւում էր. նիշանջի. այս պաշտօնեան էր միաժամանակ, կնքում սուլթանական հրովարտակները եւ օրէնքները (տե՛ս, օրինակ, Аграрный строй Османской империи XV-XVII вв. Москва, “Наука” 1963, с. 205)։

Հէնց այս մեղադրանքի վրայ է կառուցել Պարթենիոսն իր ամբողջ երկը եւ բանավէճի տրամաբանութիւնը։ Պատահական չէ, որ իր գործը նա սկսում է այս փաստարկով. «Նրանք մեր ունեցած փաստաթղթերի բովանդակութիւնն էին փոփոխութեան ենթարկում, ուրիշների վրայ ամբողջ ջնջումներ ու պոկումներ կատարում եւ երուսաղէմեան կնիքներով ու դատական միջնորդութիւններով լի տոպրակներ լցնում»[31]։

Հակառակորդների այս գործելակերպը Պարթենիոսը ցուցադրում է դրանից յետոյ եւս՝ կողմերի հաշտութեան համաձայնագրի (1735), եւ դրա կեղծման պարագայում՝ առհասարակ համարելով «թագաւորական օրէնսգրքերի զեղծարարներ», որոնք գործել են Օսմանեան պաշտօնէութեան կաշառուածութեան շնորհիւ։ Այս հոգեւորականի երկի բուն նպատակը պարզ է՝ ամէն գնով վարկաբեկել եւ նսեմացնել իր հակառակորդներին, բայց, կարելի է կարծել, որ վերջիններս նոյնպէս այդ բոլոր մեղքերի մէջ կարող էին մեղադրել իրեն՝ Պարթենիոսին՝ վկայակոչելով իրենց ի նպաստ տրուած եւ տրամագծօրէն հակառակն ապացուցող վաւերագրերը։

Ի հակադրութիւն վերոյիշեալի՝ կարծում եմ, առանձին հետազօտութիւն պահանջող թեմայի, քննարկուող երկում կարեւոր նշանակութիւն են ստանում ճանաչողական բնոյթի արժէքաւոր շատ տեղեկութիւններ Օսմանեան դատաիրաւական համակարգի, կառավարութեան, մայրաքաղաքի դատաւորների, պետական կառոյցների գործավարական կարգի ընթացքի վերաբերեալ։ Երուսաղէմում վիճելի տարածքների պատկանելութեան տեսակէտից եւս կարեւորութիւն ունեն Պարթենիոսի անդրադարձները Երուսաղէմի իրաւարար դատարանին, որը կոչուած էր հարթելու կամ լուծելու տարբեր միաբանութիւնների միջեւ չդադարող վէճերն ու տարաձայնութիւնները։ Եւ դարձեալ, անկախ այս աշխատութեան բանավիճային-պարսաւական բնոյթից, պէտք է կարծել, որ վաւերագրական արժէք ունեն այն պաշտօնական հրամանագրերի (ֆերմաններ, բերաթներ, հաթթեր) տեքստերը, որոնք ամրագրում են Պարթենիոսի հակառակորդների յաջողութիւնները կամ իրաւունքների հաստատումը սոյն բանավէճի ընթացքում։ Հաւաստիութիւն են ներշնչում Յոյների եւ Հայերի միջեւ հաշտութեան բանակցութիւնների (1735) նկարագրութիւնները, որոնք այս կամ այն չափով առկայ են նաեւ հայկական տեքստերում[32]։ Պարթենիոսը լաւատեղեակ է նաեւ Երուսաղէմի դատարանի գործունէութեանը, նրա իրաւական ու գործնական նշանակութեանը միաբանութիւնների միջեւ առաջացած վէճերի ընթացքում, մի հանգամանք, որ քիչ է լուսաբանուած Հայ հեղինակների շարադրանքներում։ Այս ոլորտում բոլոր հաթթերը եւ որոշումները, ըստ Պարթենիոսի, յենւում էին Երուսաղէմի դատաւորի զեկոյցի կամ դատարանի վճռի վրայ[33]։

Հետաքրքիր են նաեւ յունական կողմի մարտավարութեան բացայայտումները Պարթենիոսի երկում։ Վերոյիշեալ հաշտութեան բանակցութիւնները վարելով հայկական միաբանութեան հետ, Երուսաղէմի ուղղափառ պատրիարքութիւնն անցաւ դրան հակառակ գործողութիւնների, որ խոստովանում է հեղինակը. «Որոշեցինք համբուրել այն ձեռքը, որ հնարաւոր չէ կծել։ Ուստի ձեւացնելով, որ տեղի ունեցածին միանգամայն անտեղեակ ենք, հաշտութեան կոչով գնացինք [Հայոց] մօտ պատգամաւորու-

[31] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 5։

[32] Նոյն տեղում, էջ 51-57։ Տե՛ս նաեւ **Ա. Տէր Յովհաննէսեան**, ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի հ. Ա, էջ 448, հ. Բ, էջ 35, 45։ Տ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, հ. Բ, էջ 702, 715-717 եւ այլն։

[33] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 31-33։

թեան»[34]։ Եւ քիչ անց՝ «Մտքերի բազում փոփոխութիւններից յետոյ որոշեցինք բարեկամութիւն ձեւացնել եւ դա, եթէ հնարաւոր է, փաստաթղթով վաւերացնել»[35]։ Այս առթիւ Ա. Տէր Յովհաննէսեանը գրում է, որ խաղաղութեան քօղի տակ հակառակ կողմը հետամտում էր «արկանել զնոսա ի քուն թմրութեան և անհոգութեան»[36], իսկ Տ. Սաւալանեանցը նկատում է, որ այդ նոյն միջոցներին Կոստանդնուպոլիս եկած պատրիարք Մելետիոսը իր հակառակորդների դէմ գործածում էր «խրոխտ լեզու՝ մերձաւորներից չթաքցնելով իր յետին մտքերը[37]։

Այսուհանդերձ, պայմանագիրը կնքւում է. ուղղափառների կողմից այն ստորագրել էին պատրիարք Մելետիոսը եւ սոյն աշխատութեան հեղինակ, Պաղեստինի Կեսարիայի մետրոպոլիտ Պարթենիոսը, հայկական կողմից՝ պատրիարքներ Գր. Շիրուանցին եւ Յովհ. Կոլոտը[38]։ Միեւնոյն ժամանակ յունական կողմը յաջողում է արքունիքից նոր, զուտ իր օգտին հարցը սկզբունքօրէն լուծող հրովարտակ ձեռք բերել, ըստ որի, նրանց սեփականութիւնն էին համարւում Երուսաղէմում եւ Բեթղեհէմում գտնուող բոլոր տեղերն ու եկեղեցիները, եւ նրանց իրաւասութիւնները տարածւում էին Ասորիների, Ղպտիների ու Հապէշների վրայ։ Մելետիոսն այս հրովարտակի պատճէնն ուղարկում է եւ ծածուկ արձանագրել տալիս Երուսաղէմի դատարանի տոմարներում[39]։ Իմանալով այս, հայկական կողմը դրան նոր հրովարտակ է հանել տալիս Բ. Դռնից՝ այս անգամ ամբողջովին իր օգտին[40]։

Դժուար է պաշտօնական հրովարտակների այս իրարամերժ վճիռները բացատրել միայն կաշառակերութեամբ կամ բարձրաստիճան պաշտօնէութեան բեկբեկուն ընթացքով։ Դրանք, անշուշտ, մշտապէս ուղեկցում էին պաշտօնէական վերնախաւի գործունէութեանը, բայց այստեղ հարկ է հաշուի առնել նաեւ այլ իրողութիւններ, որպիսիք էին իշխանութեան համար մրցակցութիւնը արքունիքի եւ կառավարութեան՝ մեծ վեզիրի դիւանի միջեւ, ինչը նկատում է ռուս հետազօտողը[41], ինչպէս եւ եւրոպական դեսպանների յաճախակի միջամտութիւնները, որոնցից օգտւում էին կողմերն ըստ հնարաւորինս։ Տ. Սաւալանեանցը յունական կողմին տրուած վերոյիշեալ հրովարտակը բացատրում է հէնց արքունիքի միջամտութեամբ, նշելով, որ Մելետիոսը գործի մէջ էր դրել իր ազգակից ոմն Արապ Գալֆայի, որը սուլթանի ներքինապետ Պէշիրի ճարտարապետն էր[42]։ Սրա միջնորդութեամբ էր Մելետիոսը սուլթանին ներկայացրել հիջրայի 1062 թ. (1651-1652) մի հրովարտակ, ըստ որի, իբր, Հայերը բռնութեամբ են տիրել Ս. Յակոբի վանքին՝ նախապէս ուղղափառներից վարձակալելով այն եւ վճարելով երկու հարիւր ոսկի[43]։

Հայկական կողմը եւս օգտւում էր եւ կաշառքների, եւ հովանաւոր պաշտօնեա-

---

[34] Նոյն տեղում, էջ 45:

[35] Նոյն տեղում, էջ 47:

[36] **Ա. Տէր Յովհաննիսեան**, նշ. աշխ., հ. Բ, էջ 35:

[37] **Տ. Սաւալանեանց**, նշ. աշխ., հ. Բ, էջ 715:

[38] Նոյն տեղում, էջ 717:

[39] Նոյն տեղում, էջ 717-718:

[40] Նոյն տեղում, էջ 718:

[41] **М. С. Мейер**, Османская империя в XVIII веке. Москва, “Наука”, 1991, с. 144.

[42] **Տ. Սաւալանեանց**, նշ. աշխ., հ. Բ, էջ 719: Սա այն նոյն ներքինապետ (Ղզլար Աղասը) Պէշիրն է, որը մահապատժի էր ենթարկուել սուլթանի հրամանով՝ 1852 թ.: Այս գործով գլխատուեց նաեւ Հայ ազդեցիկ մեծահարուստ Յաղուպ աղան (տե՛ս **Ղ. Տայեան**, նշ. աշխ., էջ 150):

[43] **Տ. Սաւալանեանց**, նշ. աշխ., էջ 718:

ների ընձեռած հնարաւորութիւններից։ Ամբաստանուած Հայ գլխաւորներին բանտից ազատելու իւրայինները նոյնպէս փորձում էին օգտուել կաշառքի միջոցից՝ ծախսելով «զգումարս քսակաց», բայց ապարդիւն։ Նոյն իրողութեան մասին է յայտնում նաեւ 1736 թ. Մայիսին Երուսաղէմից Կոստանդնուպոլիս եկած Գրիգոր Շիրուանցին՝ «բայց յոլով դրամ եւ մերքն խարջեալ էին եւ պարտք արարեալ»,- գրում է նա[44]։

Պարթենիոսն առանձնայատուկ ատելութեամբ է խօսում մեծ վեզիր Կիւրճի Իսմայիլի դատին ներկայ գտնուող շէյխ ուլ-իսլամի (մուֆտի) մասին, քանիցս մեղադրում նրան Հայերի կողմից կաշառուելու մէջ[45]։ Բայց այստեղ աւելի շուտ գործում էր հովանաւորչութեան հանգամանքը. Հայ եռանդուն գործիչներից մէկը՝ մահտեսի Մուրատեան Յարութիւնը, շէյխ ուլ-իսլամի սեղանաւորն էր[46], որ կանխորոշում էր այդ ազդեցիկ անձի տրամադրուածութիւնը յօգուտ հայկական կողմի։ Իսկ այն, որ Մուրատեանը Սէղբոսի հետ բանտարկուածներից մէկն էր, վկայում է շէյխ ուլ-իսլամի ազդեցութեան թուլացման եւ մեծ վեզիրի անզիջում կեցուածքի մասին։

Եւ վերջապէս, հաշուի առնենք գործի՝ Երուսաղէմում Ս. Տեղեաց շուրջ բանավէճի միջազգային բնոյթի նշանակութիւնը, որին, ի դէպ, ամենեւին չի անդրադառնում Պարթենիոսը։ Մինչդեռ, հարցին ամենայն լրջմտութեամբ եւ ֆրանսական քաղաքականութեան նախասիրութիւններից ելնելով, միջամտել էր դեսպան Շ. Վիլնեովը, որին մտահոգութիւն էր պատճառում Երուսաղէմում ուղղափառ կողմի զօրացումը ի վնաս կաթոլիկական միաբանութեան, եւ երկրորդ, կայսրութիւնում Հայերի միջդաւանական ներհակութիւնների պայմաններում եւ տուեալ իրադրութեան մէջ նա հետեւում էր Հայերի աւանդական եկեղեցուն սիրաշահելու ուղեգծին։ Ֆրանսական դեսպանը յօգուտ հայերի գործել էր ոչ միայն նոր, վերջնական հաթթը շերիֆը ձեռք բերելու, այլեւ Օսմանեան վարչական կառոյցներում վաւերագրերի գրանցումները ձեւակերպելու գործում, որի մասին վկայում է Գր. Շիրուանցի պատրիարքը. «յետոյ ի ֆրանկսըզի էլչիի մօտն գնացաք և նա յանձն էառ զմեր հէտիշէրիֆն առնուլ և մեզ տալ և զմեր սէնետնէրուն թարխինն (փաստաթղթերի պատմութիւնը - Ա. Խ.) ի ղայտէն վերցընել»[47]։

Եւ վերջինն ըստ հերթականութեան, բայց իրականում առաջինն ըստ իմաստի՝ պէտք է նկատի ունենալ Օսմանեան պետութեան քաղաքականութիւնը, որը չէր կարող հաշուի չառնել Ս. Տեղեաց խնդրում տէրութիւնների շահախնդրութիւնները։ Որքան էլ Պարթենիոսը կուտակէր փաստերը Օսմանեան ռազմավարչական պաշտօնէութեան մէջ խոր արմատներ գցած զօշաքաղութեան մասին, այդ երեւոյթը մնում էր զուտ մասնաւոր գործօն՝ պետութեան եւ ներքին, եւ արտաքին քաղաքականութեան գերակայութեան շրջանակներում։ Եւ խնդրոյ առարկայ բանավէճը պէտք է աւարտուէր պետական որոշմամբ, որ ենթադրում էր իրերի սկզբնական դրութեան պահպանումը. կողմերին արգելուեց առճակատման շարունակութիւնը, նրանք պէտք է վերադառնային իրաւունքների, եւ ամէնից առաջ՝ սեփականատիրական իրաւունքի նոյն շրջանակին,

---

[44] Ստորագրութիւն ուղեւորութեան, «Սիօն», 1866, թիւ 12, էջ 185։

[45] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 117. 119, 121, 127։

[46] **Տ. Սաւալանեանց**, նշ. աշխ., հ. Բ, էջ 722։

[47] Ստորագրութիւն ուղեւորութեան, էջ 186։ Կայդի (ղայտի) բառի նշանակութիւնը Պարթենիոսը բացատրում է այսպէս. երբ որեւէ որոշման բովանդակութիւնը «նորացնելու անհրաժեշտութիւն է ծագում, դիմում է տուում եւ պահանջում (դուրս է գրում - *Ա. Խ.*) օրէնսգրքերից» (Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 99)։ Հ. Բարթիկեանի թարգմանութեամբ՝ «kayit (kaidi)-գրառում, գրանցում» (նոյն տեղում, էջ 169)։ Գր. Շիրուանցին պետական կառոյցը կոչում է նրա գործառոյթի անուամբ. նրա «ի ղայտէն վերցընել» դարձուածը, ուրեմն, նշանակում է «գրառումները վերցնել»։

որտեղ գտնում էին բանավէճից առաջ։ Այդ նշանակում էր, որ ուղղափառ կողմը հրաժարւում է իր յաւակնութիւններից եւ ամէնից առաջ՝ Ս. Յակոբի հայկական վանքի նկատմամբ յաւակնութիւններից՝ ի գոհացումն ընդդիմախօսների։

Արժանին պէտք է հատուցել Պարթենիոսին, որը մինչեւ վերջ անդրդուելի է մնում իր արդարացիութեան համոզմունքի մէջ, անգամ բանավէճը դադարեցնելու վերաբերեալ պաշտօնական որոշման սեփական մեկնաբանութեամբ՝ փորձելով մի վերջին բարոյական հարուածը հասցնել հակառակորդներին։ Յիշեալ՝ Բ. Դրան այդ որոշումը, որ վերաբերում էր առհասարակ Ս. Տեղեաց մէջ գտնուող միաբանութիւններին (կամ կայսրութեան դաւանական փոքրամասնութիւններին) նա հասցէագրում է միայն Հայերին՝ իւրօրինակ հակադարձում անելով իւրայինների պարտութեան համար. «բազում հարցերի շուրջ մեծ աղմուկ բարձրացաւ, որի պատճառով որոշեցինք ձեռք քաշել։ Այդ ընթացքում... բազում որոշումներ էին դուրս գալիս, որոնց վրայ մէկն էլ գրի առնուեց, ընդդէմ նրանց, ովքեր երբեւիցէ կը յանդգնեն դիմում գրել կամ ապացոյց ներկայացնել։ Այն ուղղուած էր Հայերի դէմ, նրանց սպառնում էր բանտարկութիւն եւ մահապատիժ»,- գրում է նա[48]։

Պարթենիոսի շարադրանքն, այսպիսով, աւարտւում է 1739-1740 թթ.՝ յոյն-հայկական բանավէճի վախճանի հետ միասին։ Պատմութեան մէջ, սակայն, մնում են յոյն-հայկական բանավէճում յունական կողմի տեսակէտի՝ նրա ձեւակերպումները, Օսմանեան իրաւական առօրեայի եւ գործընթացների վերաբերեալ իրատեսական նկարագրերն ու դրանց տրուած դիպուկ բնութագրերը, որոնց շնորհիւ նոյնպէս նրա երկը մեզ ներկայանում է որպէս սկզբնաղբիւրային անհերքելի արժանիքներով օժտուած աշխատասիրութիւն։

ԱԼՊԵՐԹ ԽԱՌԱՏԵԱՆ

ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դոկտոր, փրոֆ.

[48] Պարթենիոս Աթենացու պատմութիւն, էջ 157-159: